

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔՐԴԵՐԻ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊՎԱԾ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ

ՄԱՄՈՑ ԽԱԼԸՔ (ԴԱՐՎԵՇՅԱՆ)

Անդրկովկասի քրդերի տնտեսությանը բնորոշ անասնապահությունը իր խոր դրոշմն է դրել ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի վրա¹։ Անասունների աճը և կաթնամթերքների առատությունն ապահովելու նպատակով քուրդ անասնապահները դիմել են նաև հմայական բազմազան հնարքների՝ դարերի ընթացքում մշակելով այդ նպատակին ուղղված զանազան ծեսեր, որոնք, որպես վերապրուկներ, ավանդաբար հասել են մինչև մեր օրերը։

Անասնապահության հետ կապված քրդական ժողովրդական տոնախմբություններն ու հավատալիքներն ընդգրկում են անասնապահական տնտեսական տարեպատույտը։ Քանի որ քրդերի տնտեսական տարին հաշվվում է գարնանից, երբ ձմեռային բնակավայրերից մանր եղջերավոր անասունները տեղաշարժվում էին վաղ-գարնանային արոտավայրեր, այդ ընթացքում էլ հենց նշվում էր նոր տարին։

Եզդի քրդերի նոր տարվա տոնակատարության ամբողջ շրջանը (թ'իда сәре сәле) ընդգրկում էր գարնան առաջին ամսի (մարտի) շուրջ երեք շաբաթը։ Անդրկովկասում ապրող մահմեդական քրդերի նոր տարին (Нәвроз ըստ մուսուլմանական տոնացույցի, տոնվում էր մարտի 21—22-ին²։ Երկու դեպքում էլ տոնը ուղեկցվում էր մի շարք ծիսական արարողություններով։

Նոր տարվա տոնակատարությունը կապվում էր բնության զարթոնքի³, արգասաբերության և հատկապես մանր եղջերավոր անասունների ծննդաբերության՝ սերնդաճի հետ։ Այդ առթիվ կատարվում էին նվիրատվական-զոհաբերական ծեսեր, որոնց նպատակն էր ներազդել մարդկանց և անասուններին հովանավորող բնության ոգիներին, հայցել նրանց բարյացակամությունը։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նոր տարվա նախօրին «տարեգլուխ» կոչվող գաթայի հետ կապված ծիսաշարը։ Նոր տարվա նախօրյակին թխվում էր «տարեգլխի» (տարեմուտի) մեծ գաթան (к'длоч'е сәре сәле), որի մեջ ավանդաբար դրվում էին ուլունքներ (морж, к'әспык)⁴, և մահ-

¹ Հողվածը գրված է հիմնականում Հայկական ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ քրդերի շրջանում 1969—1975 թթ. հեղինակի հավաքած դաշտային ազգագրական նյութերի ու գրավոր աղբյուրների հիման վրա։

² Նավրոզ պարսկերեն նշանակում է նոր տարի։ Նավրոզը գարնան գալուստը խորհրդանշող ծաղիկ է (Ա. Ավդալ, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957, էջ 96), Т. Ф. Аристова, Курды Закавказья, М., 1966, стр. 175; М. Б. Руденко, Новогодние обрядовые празднества у курдов («Фольклор и этнография», Л., 1974, стр. 119); К. Р. Эюбп, И. А. Смирнова, Курдский диалект Мукри, Л., 1968, стр. 212—222.

³ Ա. Ավդալ, նշվ. աշխ., էջ 96—97։

⁴ Վերջին շրջանում ուլունքին ու քասպիկին մեծ մասամբ փոխարինել են մետաղե դրամներն ու կոճակները։

ւիճեղական քրդերը ասում էին՝ Դա Խաճե. Навроз хер бе (ո՛վ աստված, թող նաշվորդը բարով գա)⁵, իսկ եզդիները՝ Ե՛ՊՃա սաբե սալե Ե՛ՄԵԲԱՐԱԿ Կ՛ՍԻՐՈՅ Ե՛Ա (Նոր տարվա գալուստը շնորհավոր լինի): Եզդիները գաթախի մեջ մեծ մասամբ դնում էին կապույտ ուլունք (морна шин), որովհետև այն, ժողովրդի ընկալմամբ, օժտված էր լարխափան, ընտանիքի անդամներին և տան ունեցվածքը լար աչքից հեռու պահող, ամեն արգելք վերացնող հմայական զորության, որը և որոշ ուսումնասիրողների հիմք է տվել կոչելու բարի ուլունք (морна хере)⁶: Եզդի քրդերի ավանդութային կենցաղում, մասնավորապես տարազում, կապույտ ուլունք կրոնով արգելված էր: Մինչդեռ մահ-մեղական քրդերի մոտ այն հարգված և լայն տարածում գտած գույներից էր⁷: Կապույտ ուլունքի առկայությունը եզդիների Նոր տարվա դաթախի մեջ բացառիկ երևույթ էր այդ ուլյնի նկատմամբ նրանց վերաբերմունքի ընդհանուր համակարգում: Նոր տարվա օրը ընտանիքի նահապետը գաթախից բաժին էր հաննում նախ՝ ընտանիքը հովանավորող ողուն (хөдане мале), ապա մանր եղջերավոր անասուններին հովանավորող հովիվ Մամեին և խոշոր եղջերավոր անասուններին հովանավորող նախրապան Զարգանին⁸, արորի ակոսին (хөта шот) կամ արորի եզներին (гае шот), հետո միայն՝ տան անդամներին⁹:

Նոր տարվա նախօրյակին և Նավրոզի օրը (чаршәме һәсәвдә, һәсәва)¹⁰ բրդերը տան կտորին, երդիկի շուրջը, բուլնների վրա¹¹ կրակ էին վառում, որը կոչվում էր գուռգուռիկ (gö'r'gö'r'nik)¹²: Պատանիներն ու աղջիկները թռչկոտելով կրակի վրայով, դիմում էին վերերկրային ուժերին, ասելով. адана¹³ гышка дйә мьнр'а, адана дйә мьн зедәбә“ (բուրի կաթը մորս լինի, մորս կաթը շատ լինի)¹⁴: Կրակը մարելուց անմիջապես հետո, երդիկից

5 𐎠. 𐎠 𐎠 𐎠 𐎠, 𐎠𐎠. 𐎠𐎠𐎠, 𐎠 97.

6 ՆՈՒՅՆ ԵՐԵՂՈՒՄ:

7 ՉՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Թալինի և Արագածի շրջանների քրդաբնակ գույւերի 1972—1974 թթ. հեղինակի գրառումները (Այսուհետև նյութերը հղելու ենք առանց արխիվի վկայակոչման)։

8 Ա. Ա՛ւղալ, նշվ. աշխ., էջ 97, Գ. Փ. Արիստովա, նշվ. աշխ., էջ 175—176: Մահ-
մեդական քրդերի մեջ հոլիվ Մամբի և նախնական Զարդանի ըմբռնումը բացակայում է, նրանք
երկրպագում են փիրբին:

9 1969—1975 թթ. գրառումներ:

¹⁰ «Հաշվաճւո՛ւ շորքաշաքի» էր կոչվում այն պատճառով, որ համընկնում էր ХВДЬОНВНИ կամ ХВРДНВН (սուրբ Սարգիս) տոնին, այսինքն՝ փետրվարի 16—20-ին հաշորգած շորս ջաբաքների վերջին շորքաշաքին, որն իր հերթին համընկնում էր նոր տարուն։ Քն ինչպես է հայերի ձևավորված պաշտոնական տոմարի արտահայտությունը հանդիսացող երկարագործական այլ՝ ծեսո միացել թրգանի գարնանային տոնախմբությունների ծիսակարգին, հետաքրքիր և ուսումնասիրությունական արժանի հարց է։

¹¹ Հիշյալ վկայությունը գրի ենք առել Մոսկվայում, ուսումնառության եկած Իրաքյան Բորոդինսկայի քուրդ երիտասարդներից (1975, տետր № 9, էջ 25—26)։

12 1972—1975 թթ. գրառումներ:

13 Այսպեղից էլ Վ'ելաճա ան (յուղաբեր կով) դարձվածքը:

14 Գարնան անաշիի ամպրոպի ժամանակ երիտասարդներն, իրենց գլուխների վրայից քարեր գցելով, ասում էին. «сәре мән сәтәл, к'әла дйә мән р'әтәл» (գլուխս կաթսա լինի, մորս (կա-
րագի) գունդը դուրս լինի): Ուրաքը շափի միավոր է, հավասար տասը ֆունտի, իսկ ֆունտը՝
մեկ գրավանքայի (409,5 գ): Ընդ որում, իբր, որքան մեծ լինից գցվող քարը, այնքան յուղի
գունդը մեծ է: ինքներն

կախում էին ծայրերը միմյանց կապած եռոտանի (сеп'и), իսկ սրանից՝ խնոցու և տանտիկնոջ խորհրդանիշերը (երկու փոքրիկ փայտիկ, մեկը՝ խնոցու տեսքով, մյուսը՝ շորերով փաթաթած կնոջ կերպարանքով), որպեսզի տնից միշտ անպակաս լինեին խնոցին և կաթնամթերքը: Կրակի մոխրից ցանում էին տան անկյունները, տունը բարիքով ու հարստությամբ լցվելու ակնկալությամբ¹⁵: Սա նման է եզդի քրդերի Զուկրիա (зюкря) ազգակցական խմբի մեջ գոյություն ունեցող սովորույթին, միայն այն տարբերությամբ, որ նրանք տան մեջ մոխրի փոխարեն գուռգուռիկի կրակ էին շաղ տալիս¹⁶: Կրակն առհասարակ դիտվել է որպես մաքրող, շարխափան ուժ, դրա համար էլ նոր տարվա սկզբին քրդերը տնից ու անասուններից չարը հեռացնելու նպատակով դիմում էին կրակի օգնությանը:

Անասնապահ քրդերը հավատում էին, թե մանր ու խոշոր եղջերավոր անասուններին ոչ թե իրենք են պահում, խնամում, այլ հովիվ Մամնե և նախրապան Զարգանը. әм пышти тә Мәме Шьван дычън, бәр ви пәзи, пышти тә гаване Зәрзан, дычън бәр ви дәвәри, әм пышти тә Мәме Шьван, пез хвәй дыкън, әм пышти тә Гаване Зәрзан, дөвәр хвәй дыкън (քո հույսով, հովիվ Մամնե, գնում ենք հոտի ետևից, քո հույսով, հովիվ Մամնե, խնամում ենք հոտը, քո հույսով, նախրապան Զարգան, խնամում ենք նախիրը)¹⁷: Եվ պատահական չէ, որ նոր նշանակված հովիվներն ու նախրապաններն էլ դիմում էին Մամնեին ու Զարգանին, խնդրելով նրանց օգնությունն ու հովանավորությունը. гōмана мә һунън, гōмана мә тōн, йа Мәме Шьван, йа Гаване Зәрзан (մեր հույսը դուք եք, ով հովիվ Մամնե, ով նախրապան Զարգան)¹⁸:

Ուշխարների ծնի և սերնդաճի պահպանման նպատակով ևս քրդերը գործադրում էին դարերի ընթացքում մշակված հմտություններ, ինչպես նաև դիմում բազմաթիվ մոգական հնարանքների: Մնի ժամանակ անասնատերերը աղոթում էին աստծուն, ասելով хōде йәке бькә йәзари, п'ен'арбә (տեր աստված, մեկը հազար դառնա, բարի լինի): Ըստ ավանդական սովորույթի, ի նշան ուրախության, նրանք ծնի ժամանակ պատրաստում էին հալվա, գաթա, տարբեր տեսակի տոնական ճաշեր, խնջույթի էին հրավիրում բարեկամներին, մտերիմ հարևաններին: Ծաղկերույթից հետո հյուրերը հայտնում էին իրենց գոհունակությունը ասելով. мала тә т'ьме т'ер у т'ьжибә, пәз, дөвар т'ьме ле зедәбә (տունդ միշտ կուշտ ու լիքը լինի, անասունդ միշտ ավելանա), տանտիկնոջը մաղթում էին. дәсте тә ә'йаре р'ун дәрнәйе, йасъла тә кем нәбә (ձեռքդ յուղի տկից անպակաս լինի, կաթնեղենդ չպակասի)¹⁹, իսկ հովիվներին ու նախրապաններին տանտերերը նվիրում էին խմորեղենն ու քաղցրեղեն:

Անասունների ծնի ժամանակ յուրաքանչյուր քուրդ ընտանիք հոգ էր տանում, որպեսզի օջախի կրակը չմարի և իր օջախից ուրիշի երբեք կրակ չէր

¹⁵ Ա. Ավդալի, - նշվ. աշխ., էջ 97—98:

¹⁶ Քալինի շրջան, 1975, տետր № 9, էջ 6:

¹⁷ 1969—1975 թթ. գրառումներ:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Г. Ф. Чурсин, Азербайджанские курды («Известия Кавказского историко-археологического института», Тифлис, 1925, т. III, стр. 11), 1967—1970 թթ. Քալինի և Արագածի շրջանների քրդական գյուղերում գրանված նյութեր:

տալիս՝ վախենալով, որ ոչխարների ու կովերի կաթը կնվազի և նորածին մատղաշները կկուրանան²⁰, կավ տանտիկին համարվում էր այն քրդուհին, որը դարնան ընթացքում, մինչև ոչխարների ծնի ավարտը, գիշեր-ցերեկ կրակը վառ էր պահում և այդ հարցով ոչ մի հարևանի չէր դիմում²¹։ Այս սովորույթը առկա էր նաև Ադրբեջանի մահմեդական քրդերի մոտ²², նորածին ոչխարի կամ կովի կաթը հիմում և բաժանում էին մի քանի ընտանիքի, ընդ որում՝ ամանում դնում էին աղ ու հաց, որպեսզի չար աչքը խափանվի։ Նման դեպքերում ամանը դատարկ չէր վերադարձվում²³, նրա մեջ լցվում էր շաքար, բրինձ, ձավար, ալյուպիս, ըստ գոյություն ունեցող հավատալիքի, տանը կտիրեր դատարկություն և հաջորդ տարին կենդանու կաթը կպակասեր։ Ադրբեջանի քրդերը կովի կաթը հիմելով, բաժանում էին երիտասարդ աղջիկներին, որպեսզի հաջորդ տարի կովը էգ հորթ ծննդաբերեր²⁴։ Գարնանը, երբ ուրիշի մերան էին տալիս, այն պետք է անպայման վերադարձվեր, հակառակ դեպքում, իբր, բարին ու բարիքը գնում էր ուրիշի (хер у бәрәк'әт дьчы ванр'а)²⁵։ Նման հավատալիքի հանդիպում ենք նաև Հայաստանի քրդերի կենցաղում։

Ըստ քրդական հնագույն ավանդության, կենդանիներին առաջինը ընտելացրել է տղամարդը։ Այդ է պատճառը, որ անասնապահ քրդերի կենցաղում ընդունված էր, որ ծննդաբերող կենդանուն նախ մի քանի օր խնամում էր տղամարդը և ապա միայն կինը։ Եթե այդ կարգը խախտվեր, իբր, նորածին ոչխարներն ու կովերը կստանային կրծքի հիվանդություն, ավելին՝ հաջորդ տարին այլևս չէին ծննդաբերի²⁶։

Գարնանը լեռնային արոտավայրեր բարձրանալը (һьлгер') կարևոր իրադարձություն էր քրդերի տնտեսական կյանքում։ Այդ երևույթը անասնապահ քրդերի համար ունեցել է կենսական նշանակություն, ուստի և ստացել է տոնական բնույթ։ Անասնապահներն ամառանոց բարձրանալու պատրաստվում էին գրեթե ամբողջ ձմռան ընթացքում՝ վերանորոգում էին վրանները, կարգավորում կահ-կարասին, ձեռք էին բերում այն ամենը, ինչ անհրաժեշտ էր ամառանոցային շրջանում։ Երիտասարդ աղջիկների, պատանիների համար

²⁰ С. А. Егн а з а р о в, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии («Записки Кавказского отделения Императорского Русского Географического общества», кн. XIII, вып. 2, 1891, стр. 35), Ա. Ավդալ, Քուրդ կինը նահապետական ընտանիքում ըստ ազգագրական ֆոլկլորային նյութերի (Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. I, Երևան, 1948, էջ 225)։

²¹ С. А. Егн а з а р о в, նշվ. աշխ., էջ 36։

²² Е. П ч е л н и а, По Курдистанскому уезду Азербайджана («Советская этнография», 1932, № 4, стр. 113)։

²³ Վատ նախանշան էր համարվում դատարկ աման տուն բերելը և տակը մրոտած կաթսան կամ ամանը երեկոյան տնից դուրս հանելը (Мела Махмуд Баязиди. Нравы и обычаи курдов, М., 1963, стр. 44)։

²⁴ 1969—1973 թթ., տետր № 3, էջ 24—25։

²⁵ Քելրաշարի շրջան, 1974, տետր № 5, էջ 11։

²⁶ А. III. Ш а м и л о в, К вопросу о феодализме у курдов («Проблемы истории докапиталистических обществ», 1934, № 9—10, стр. 114). Հիշյալ ավանդությունը հետաքրքրական է և պահանջում է գիտական լուրջ ուսումնասիրություն։ Գուցե դրանով հնարավոր լինի բացահայտել նոր մանրամասներ՝ կապված քրդերի անասնապահական զբաղմունքի աշխատանքի սեռահասակային բաժանման և դրանց վաղեմի դրույթյան հետ։

կարվում էր նոր հագուստ: Կանայք պատրաստում էին խմորեղեն (հալվա, գաթա և այլն), Գարնան երթի նախապատրաստում էին նաև անասուններին, Աշքի ընկնող ոչխարների, դառների, այծերի պարանոցից կախում էին զանգուլակներ, գուլնգուլն ներկած բոժոժներ, ծոպքեր (փոթոթներ): Հոտի առջև վից ընթացող նոխազի (ների):²⁷ պարանոցից կախում էին ամենամեծ զանգը: Անասունների այգ զարդերին վերագրվում էին պահպանիչ-հմայական հատկություններ:

Երբը գլխավորում էր ավագ հովիվը, որը սրնգի նվագակցությամբ հոտը առաջնորդում էր դեպի լեռնային արոտավայրեր: Ամառանոց հասնելուն պես, անասնատերերը մտահոգվում էին հաջողակ քոչատեղ ընտրելու հարցով: Իրենց նախկին քոչավայրում (war) իջևանելիս քրդերն ասում էին. waro bəmbarəkbə, n'ep'arbə, əm xer tə bvinəh, xode tə warəyən šenkə, avakə (քեզ բարով տեսնե՞ք, քոչավայր, աստված քեզ շենացնի, անփորձանք լինե՞ս): Եթե նախորդ տարին քոչավայրում հիվանդացել էր որևէ կենդանի կամ տնտեսությունը կորուստ էր կրել, ապա հաջորդ տարին այլևս այդտեղ չէին իջևանում²⁸:

Հետաքրքիր են նաև մանր ու խոշոր եղջերավոր անասունների կթի ավարտը խորհրդանշող՝ դառների խուզի, սարից իջնելու (դադեր'), խոյը ոչխարների մեջ բաց թողնելու հետ առնչվող, ոչխարների հղիացումը հավաստող և ծինը նշող ծիսական արարողությունները, որոնք վեր էին ածվում յուրատեսակ տոնախմբությունների: Նշված բոլոր դեպքերում երիտասարդները դճուզունայի նվագակցությամբ երգում-պարում էին, կանայք սարվորների համար թխում էին խմորեղեն, որից բաժին էին հանում նաև դաշտում մնացածներին, իսկ անասնապահներին տալիս էին նվերներ (թաշկինակ, գուլպա, ձեռնոց, երբեմն նաև՝ հագուստ, տրեխ և այլն), որով յուրովի իրենց գոհունակությունն էին հայտնում նրանց բարեխիղճ աշխատանքի համար: Կթի ավարտը նշվում էր արդեն հասուն դառները ոչխարների հոտերին խառնելով:

Ամառանոցից վերադառնալը (դադեր') կարևոր իրադարձություն էր քրդերի տնտեսական կյանքում, թեև սա այնպիսի ուրախություն չէր, ինչպիսին ամառանոց բարձրանալն էր: Ի նշան ուրախության նրանք զոհաբերում էին անասուն և խնջուլքի հրավիրում համայնքի անդամներին, միմյանց մաղթում հաջողություն՝ ձման դժվարությունները հաղթահարելու և հաջորդ տարին նույն քոչավայրը վերադառնալու հույս ու հավատով: Հրաժեշտ տալով քոչավայրերին, անասնատերերը հայտնում էին իրենց գոհունակությունը, ասելով. waro šenbē, mə t'ō qəziyā xwə tə nədit, saγ'i slāməti əm saləkə dñe dīsa bənə vra (քոչավայր, շեն մնաս, քեզնից ոչ մի վնաս (փորձանք) չտեսանք, բարով-խերով հաջորդ տարին ևս զանք այստեղ)²⁹:

Անասնապահության հետ կապված կարևոր իրադարձություն էր խոյերին ոչխարների մեջ բաց թողնելը (բəran bərdan)³⁰, որը միշտ էլ ուղեկցվել է

²⁷ Ների՝ հոտն առաջնորդող որձ այծ («Курдско-русский словарь», М., 1957, стр. 259). Ներին անպայման լինում էր ամորձատված (1972—1973 թթ. գրառումներ):

²⁸ Мела Махмуд Баязиди, նշվ. աշխ., էջ 44, Ս. Դ. Լիսիցյան, Զանգուլթի հայերը, Երևան, 1969, էջ 144:

²⁹ 1969—1974 թթ. գրառումներ:

³⁰ Այս տոնի մասին առաջին անգամ հիշատակել է Վիկանդերը (S. Vicander, Ein Fest bei den Kurden und im Avesta, «Orientalia Suecana», Vol. IX, 1960, Uppsala).

ծիսական հետաքրքիր արարողություններով: Աշնան կեսերին,— գրում է Մելա Մահմուդ Բայազիդին,— նրանք (քրդերը), ընդունված սովորության համաձայն, թխում են գաթա և խոյերին զարդարելով, գնում հոտերին (ոչխարներին) ընդառաջ: Ներկա գտնվողներին բաժանում են գաթա, իրենք նույնպես ուտում և զվարճանում են, որից հետո խոյերին բաց են թողնում ոչխարների մեջ³¹:

Քուրդ ասացողների վկայությամբ, մանր եղջերավոր անասունների բեղմնավորումը հիմնականում կատարվում էր աշնան 40-րդ օրը, այսինքն՝ հոկտեմբերի առաջին տասնօրյակից հետո, այն հաշվով, որպեսզի ծինը տեղի ունենար վաղ-գարնանային արոտի շրջանում՝ դուղայում (մանր եղջերավոր անասունների ծնավայրում): Խոյերի բաց թողնումը նաև աշնան տոն էր, որը մեծ ուրախություն էր պատճառում անասնատերերին, հատկապես հովիվներին, որովհետև դրանով ավարտվում էր նրանց վարձման ժամկետը (տարին): Այդ տոնի հետ ժողովուրդը կապում էր իր իղձերի իրականացումը, ուստի ծիսական արարողություններով սիրաշահում էր անասուններին հովանավորող ոգիներին: Կազմակերպում էին խաղեր և այլ բնույթի զվարճություններ, թխում էին խմորեղեն, պատրաստում տոնական ճաշեր (բրնձով փլավ, հարիսա, էրիշտա) և բաժին հանում հովիվներին, նախապաններին, որը կոչվում էր խոյի հաց (нане бэрана), ծննդկանի հաց (зә'де бэрана), խնջուլի էին հրավիրում հարևաններին և շնորհավորում միմյանց: Ծղզի քրդերը խոյերին զարդարում էին տարբեր գույների ներկված բրդե փնջերով, իսկ մահմեդական քրդերը՝ կարմիր դուլին հողը լուծում էին ջրի մեջ ու դրանով ներկում կենդանուն³²: Խոյերի պարանոցներից կախում էին զանգուկներ ու հմայիլներ (дарже тоа'е), կապում էին գույնզգույն փուշիներ³³, եղջուրներին ամրացնում կարմիր խնձորներ, դմակներից կախում ծոփքեր (дау р'иши дыкырән). Մասիսի շրջանի մահմեդական քրդերն այդ ամենից բացի, խոյերի ճակատից կախում էին նաև հայելի, հավատալով, որ այն բեղմնավորումը կդարձնե հաջող³⁴:

Ծղզի քրդերի մոտ ընդունված սովորույթ էր հանդիսավոր կերպով դուրս բերել զարդարված խոյին, որի երկու կողմերում կանգնում էին տոնականորեն հագնված երկու դեռահաս աղջիկներ: Նրանք կատակների, զվարճությունների ու դժուլ-զուռնայի նվագակցությամբ, խոյի եղջուրներից բռնած, ընդառաջ էին գնում ոչխարներին: Մահմեդական քրդերը դեռահաս աղջկան նստեցնում էին խոյի մեջքին³⁵: Դեռահաս աղջիկների ծեսին մասնակցելը խորհրդանշում էր արարողության գլխավոր նպատակը՝ էգ գառ ծննդաբերելը ապահովելու մի-

1961, S. 7—10): Նա այդ տոնը կապում է ավեստական varsni-hardzana-ի (որձերի բաց թողնում) հետ, որը համընկել է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և եղել է խոյերին ոչխարի մեջ բաց թողնելու տոն (Мела Махмуд Баязиди, նշվ. աշխ., էջ 6, 43):

³¹ Նույն տեղում:

³² Դորքեչանական ՍՍՀ-ում 1973 թ. կատարված գրառումներ, տետր № 5, էջ 10, 12:

³³ Այդ օրը երիտասարդ աղջիկները ևս փորձում էին իրենց բախտը: Նրանք թաքուն խոյերի պարանոցներին էին կապում իրենց փուշիները: Հավաքված երիտասարդներից ով փուշին արձակեց, իբր նա էլ լինելու էր աղջկա ապագա ամուսինը: Երբեմն ծնողները նույնիսկ համաձայնության էին գալիս և պսակադրում (Ә'. Шамилон, Бэрэвок, 1963, էջ 66, Քալինի շրջանի 1973 թ. գրառումներ):

³⁴ Մասիսի շրջան, 1974, տետր № 7, էջ 17:

³⁵ 1973 թ. Ադրբեջանական ՍՍՀ-ում կատարված գրառումներ:

տոմար: Հատկանշական է, որ այդ օրը անասնատերերը կանխագուշակում էին նաև, թե մոտավորապես ձմեռը ինչպիսիք էր լինելու: Քուրդ ասացողների վկայությամբ, եթե խոյին ընդառաջ գնար սև ոչխար, ապա տարին (ձմեռը), իբր, նպաստավոր կլիներ, ձյունը՝ քիչ, եթե չալ ոչխար գնար՝ ձմեռը փոքր-ինչ խիստ, իսկ եթե սպիտակ ոչխար՝ ձյունը՝ շատ, ձմեռը՝ ցուրտ³⁶:

Անասնատերերի համար նշանակալից իրադարձություն էր նաև ոչխարների բեղմնավորման հարյուրօրյակի (сәде пез) տոնը, որն արդեն երաշխիք էր, որպեսզի անասնատերերը նախապատրաստվեին դառնների տեղի (к'оз) հարդարմանը և ծնի ընդունմանը: Մեկա Մահմուդ Բայադիդին գրում է. «Խոյերի բաց թողնումից 100 օր անց, Сәде пәз-ին կրկին պատրաստում էին գաթա ու ճաշեր և մանր եղջերավոր անասունների բարեհաջողության (հղի լինելու) համար ուրախանում»³⁷: Դաշտային ազգագրական նյութերը վկայում են, որ այդ արարողությունների ընթացքում քուրդ անասնատերերը սիրաշահում էին ոգիներին, նրանց պատվին նվիրատվություններ էին կատարում, պատրաստում հատկապես չորթանով խաշիլ (сәрдәдәш): Ասացողների վկայությամբ, խաշիլը պատրաստվում էր, որպեսզի դառներ սպիտակ ծնվելին³⁸: Այս ճաշատեսակով նվիրատվություն կատարելը, բացի վերահիշյալ նշանակությունից, հավանաբար, ունեցել է նաև ոգիներին սիրաշահելու և ղոհաբերական իմաստ՝ սկսվող նոր տարում կաթնամթերքի առատությունն ապահովելու ակնկալությամբ: Նշված տոնի առթիվ ևս քրդերը կազմակերպում էին խաղեր, զվարճություններ ու խնջույքներ:

Անասունների սերնդաճն ու կաթնամթերքների առատությունն ապահովելու համար կարևոր նշանակություն է ունեցել կենդանիներին զերծ պահելը զանազան հիվանդություններից և նրանց բուժումը: Դարերի փորձը ժողովրդի մեջ մշակել է բազմաթիվ ճշմարիտ դիտումներ ու հմտություններ նաև այս բնագավառում, ըստ որում, իրական միջոցները միշտ էլ զուգակցվել են բնահավատական հնարքներով: Քուրդ անասնապահները անզոր լինելով անասունների որոշ հիվանդություններ բուժել ժողովրդական բժշկության միջոցով, ստիպված դիմել են գերբնական ուժերի զորությանը: Հետևաբար, անասնապահության զարգացումը հանգեցրել է իրական և հմայական բժշկության բազմազան ձևերի ու միջոցների զուգորդմանը: Մանր եղջերավոր անասունների համար վտանգավոր էր ծաղիկ (нәхwәшййа һур, йа һур)³⁹ կամ հաբ (һ'әб)⁴⁰ հի-

³⁶ Ә. Шамиллов, նշվ. աշխ., էջ 61, Արագածի շրջանի 1972—1973 թթ. գրառումներ:

³⁷ Мела Махмуд Баязиди, նշվ. աշխ., էջ 43:

³⁸ Հայտնի է, որ Անդրկովկասի քուրդ ազգաբնակչությունը, տեղական պայմաններից ելնելով, գերադասում էր ունենալ ավելի շատ կարմիր և սև ոչխարներ, որովհետև դրանք համեմատաբար դիմացկուն էին և հեշտ խնամվող: Մինչդեռ քրդական բանահյուսության մեջ մեծ տեղ է տրվում սպիտակ ոչխարին: Դա, ըստ երևույթին, բացատրվում է նրանով, որ վաղ անցյալում, մինչև քրդերի պատմական հայրենիքից կտրվելը, առավելապես պահել են սպիտակ ոչխար, որի բուրդն օգտագործվել է հարսանյաց օթիտի, գործվածքեղենի, ինչպես նաև գորգերի ու այլ նպատակների համար:

³⁹ Եզդի քրդերը խուսափում էին հիվանդության անունը տալուց՝ վախենալով, որ այն կտարածվի: Այդ նկատառումով էլ այն կոչում էին бѣмбарэки (բարով գա, անփորձանք լինի գալը):

⁴⁰ Հաբ արաբերեն նշանակում է հատիկ («Арабско-русский словарь», М., 1958, стр. 189). Նույն իմաստով էլ հանգես է գալիս քրդերենում: Հիվանդությունը հաբ անվանումը ստացել է բուժման նպատակով օգտագործվող ուլունքի վրայի մանր հատիկների (հաբ) նմանությունից:

վանդությունը, որով կենդանիները հիվանդանում էին հատկապես ձմռան ամիսներին՝ վատ խնամքի ու ցրտի հետևանքով: Հմուտ հովիվներն արտաքին նշաններից իսկույն ախտորոշում էին հիվանդությունը, հիվանդ կենդանուն անանձնացնում էին և նրա նկատմամբ հատուկ խնամք տանում⁴¹:

Ասացողները հավատացնում են, թե այդ հիվանդությունը «բուժվում էր» նաև հմայական զորություն ունեցող կախարդական թասի և ուլունքի օգնությամբ: Թաս ունեցել են առավելապես հարուստները: Որպես սուրբ մասունք այն պահվել է առանձին տեղում՝ տան ծալքի մեջ, սպիտակ և այլ դույնի կտորներով փաթաթած⁴²: Հիշյալ թասը եզդի քրդերն անվանում են հովիվ (Մամբի թաս (T'aca Məme şəvan), իսկ մահմեդական քրդերը՝ հմայող թաս (T'aca hewae): Թաս ունեցող ընտանիքներն ամեն տարի նրա պատվին կատարում էին զոհաբերություն⁴³: Հոգևորականներն այդ թասով սառը ջուր էին շաղ տալիս ոչխարների վրա⁴⁴: Քուրդ անասնատերերը հիվանդ ոչխարներին անց էին կացնում շորով կապած թասի տակով, Ադրբեջանի մահմեդական քրդերը՝ նաև Ղուրանի տակով⁴⁵: Հիշյալ հիվանդությունն սկսվելիս, հաբի ուլունքը կախում էին ոչխարների մոտ, որն է տեղից: Նրբամեն էլ այն փարախ էր բերվում դժու-զուռնայի նվազակցությամբ⁴⁶: Եթե հիվանդությունը վտանգավոր էր, ապա, ըստ գոյություն ունեցող հավատալիքի, ուլունքը պետք է ճաքեր և հաջորդ առավոտյան տվյալ հոտից սատկեր որևէ ոչխար: Սակայն անասնապահներն աշխատում էին սատկելու ենթակա ոչխարը մորթել իբրև նվիրատվություն: Ուլունքը, սովորաբար, ամրացվում էր այն դռան զխին, որտեղից անցնում էին ոչխարները կամ կախվում էր որևէ ոչխարի վզից, որպեսզի հոտը զերծ պահվեր ամեն տեսակ հիվանդություններից:

Անասունների համար վտանգավոր էր դաբաղ (TƏBƏK) հիվանդությունը, որը մեծ մասամբ տարածվում էր արոտային շրջանում, ոչ անձրևային, չոր եղանակի ժամանակ: Դաբաղով հիվանդ կենդանուն քրդերը անց էին կացնում ցեխաջրի միջով, որից հետո բերանը լվանում էին լոռախառն աղաջրով: Թա-

Ըստ ավանդության, այդ ուլունքը կարկուտի հետ երկնքից է վայր ընկել և օժտված է հմայական զորությամբ: Ասացողները հաստատում են, թե իբր ուլունքն այնքան զորեղ է, որ մակարդում է կաթը: Հաբի ուլունքը չպետք է ջփթել աշքի և այլ ուլունքների հետ: Սասունցի հայերը ևս հար բառը օգտագործում են նույն իմաստով (Վ. Պետրոսյան, Սասնա ազգագրություն, Երևան, 1965, էջ 119):

⁴¹ Թալինի շրջան, 1974, տետր № 3, էջ 21, Արագածի շրջան, 1973, տետր № 4, էջ 31:

⁴² Սովորաբար թասը թույլատրվում էր բացել նրա համար կտոր (շապիկ) դնելուց հետո: Այն բացելու պատիվը պատկանում էր շամուռնացած երիտասարդ աղջիկներին ու պատանիներին, չեխներին ու գրբացներին (քուչակներին): Թասը բացելու օրվա ամբողջ գիշերը լույսը վառ էր պահվում:

⁴³ Ձոհաբերություն էին կատարում նաև թաս և ուլունք չունեցող անասնատերերը, որոնք իրենց կենդանուն բուժելու համար դրանք վերցնում էին ունեցողներից, ապա թասին նվիրում կտոր, լուղ, պանիր (նվերը քրդերին կոչվում է *мама*, գ'Երախ'ա морне, T'ace—ուլունքի, թասի) և նույնիսկ մանր եղջերավոր անասուն, որը մորթվում էր թասի տիրոջ տանը:

⁴⁴ Իսկ վախեցած հիվանդներին այդ թասով ջուր էին խմեցնում:

⁴⁵ Քելրաշարի շրջան, 1973, տետր № 5, էջ 13:

⁴⁶ Ուլազարավ է, որ գյուղում հարսանիք լինելիս, անասնատերերը նվազողներին հրավիրում էին իրենց ոչխարների փարախում նվազելու, որպեսզի անասունների մեջ ևս ուրախությունը տարածվեր և, որ ամենից կարևորն է, հիվանդությունը հեռացվեր (Արագածի շրջան, 1972, տետր № 6, էջ 21, Թալինի շրջան, 1973, տետր № 7, էջ 31):

լինի շրջանի Բայսըզ գյուղում⁴⁷ հիվանդ կենդանու լեզվի վրա դնում էին թոնրի տաք հաց (բոքոն)։ Ադրբեջանի մահմեդական քրդերը հիվանդ կենդանու լեզվին քսում էին ոսկեգույն ձկնիկ, Աղջիքենդ գյուղի (Ադրբեջանական ՍՍՀ) քրդերը կենդանու սմբակների արանքում տեղավորում էին սև գույնի կարծր քարեր⁴⁸։ Էջմիածնի շրջանի Քյուրաքյան գյուղում, դաբաղը կանխելու նպատակով, աննշան խորուքյամբ սղոցում էին խոշոր եղջերավոր անասունների եղջյուրները, իսկ քրդական Օրթլի ցեղի մոտ ընդունված է եղել 10—14 տարեկան աղջիկներին նստեցնել եռոտանու վրա և դրա տակով անցկացնել դաբաղով հիվանդ ուխարներին⁴⁹։ Այս սովորույթի հետ կապված գոյություն ունի նույնիսկ ժողովրդական ասացվածք՝ զԵՏԵԿ ՇԵՐ զԵՏԵԿԵ, ԾՅԿ ԴԵՐՄԱՆԵ ԴԵՅԵԿԵ (տեփուրը տեփուրին, հարսը՝ դաբաղի բուժող)⁵⁰։

Դեղնախտը (Зарьк) նույնպես կենդանիների համար վտանգավոր հիվանդություն էր, որով հիվանդանում էին հատկապես մանր եղջերավոր անասունները։ Դրա բուժման լավագույն միջոցը համարվում էր հիվանդ կենդանուն առավոտյան սառը ջրով լողացնելը, իսկ սարերում՝ ձյան վրա մեկ-երկու ժամ կանգնեցնելը։

Անասունների տարածված հիվանդություններից էին դավթոլը, յամանը, լուծը և այլն, որոնք հիմնականում բուժվում էին իրական միջոցներով։

Յամանը տարածվում էր հատկապես խոշոր եղջերավոր անասունների մեջ։ Կենդանու մաշկի վրա դուրս է գալիս 3—4 սմ տրամագծով ուռուցք, որը շատ վտանգավոր է։ Բուժման միակ միջոցը նրա շորս կողմից շշի տափակ ծայրակալով խարանելն էր։

Հիվանդությունների բուժման նպատակով քուրդ անասնապահները տարվա ընթացքում բազմիցս դիմում էին սրբավայրերի ու հմայիլների օգնությանը։

Քրդական հավատքում առանձնահատուկ տեղ էին գրավում սրբավայրերը (Зйарәт), որոնց զորությունը, արարչագործությանը քրդերը շատ էին հավատում⁵¹։ Այսպես, Արագածի շրջանի Քրդի Փամբ գյուղի Ղամարդաղ կոչվող սարում կար մի սրբավայր, ուր ամեն տարի ամռանը արածում էին ալդ և շրջակա գյուղերի անասունները։ Ժողովուրդը նշված սրբավայրի աղբյուրի ջրից ցանում էր անասունների վրա, որպեսզի նրանք չհիվանդանային⁵²։ Անասուններին սրբավայր էին տանում այսպես կոչված «սրբի օրերին» (р'оже Зйарәте), յուրաքանչյուր անասնատեր այդ օրն իր հետ տանում էր տանը պատրաստված տոնական ճաշերից, առավել հարուստները նույնիսկ անասուն էին զոհաբերում և խնջույթի նստում ներկա գտնվողների հետ։ Ծրբեմն էլ հովիվներն արևածագին հիվանդ կենդանու երեսը դարձնում էին դեպի հայտնի սրբավայրերը (Եթե քեզ ԴԵԴԱՆԵ ԵթԵՅ Զйарәте) և խնդրում, որ սրբերը օգնեն իրենց (Һәварә мә Зйарәте)։ Սրբավայր էր համարվում նաև Գոչուղի լեռնանցքում (Ադրբեջան) գտնվող Ալիբուլաղ աղբյուրը։ Քուրդ անասնապահ-

47 Թալինի շրջան, 1972, տետր № 3, էջ 151։

48 Քելբաշարի շրջան, 1973, տետր № 5, էջ 41։

49 Դաբաղը նույն կերպ էին բուժում նաև Զանգեզուրի հայերը (Մ. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 138)։

50 Շահումյանի շրջան, 1973, տետր № 3, էջ 115։

51 Мела Махмуд Бағзиди, նշվ. աշխ., էջ 34։

52 Եղդի քրդերի սրբավայրերը սովորաբար ունեցել են աղբյուրներ։

ները, արոտային շրջանում բուշելիս, իջևանում էին այդտեղ և զոհաբերություն կատարում⁵³:

Անասուններին հիվանդություններից ու շար աչքից հետո պահելու նպատակով, քրդերը դիմում էին նաև դաղդղղանների, դանդուկների, ուլունքների (մանավանդ կապույտ դուլնի), աչքուլունքի, խխունջների և գիր արված թղթերի ու աղոթքների օգնությանը: Այդ հմայիլները, սովորաբար, կախում էին կենդանու պարանոցից, եղջյուրներից կամ էլ կպցնում էին որևէ շերեացող տեղում: Հմայիլների իմաստն է եղել՝ պահպանել կենդանիներին, խափանել շարը, պարգևել երջանկություն ու բախտավորություն⁵⁴: Երբեմն այն համոզմամբ, թե՛ *даг' у дрѹф ма нае, мала ма нае* (նշանն ու դրոշմը մեր վրա չի գալիս, մեր տանը չի գալիս), պատրաստել նախշերով փայտիկներ⁵⁵ (դաղդղղան, *дѹг'дѹг'ан*, ավելի գործածականը՝ *дарке тѹа'е-նн է*)⁵⁶ և կախել կենդանու պարանոցից, որը կատարել է թե՛ նշանի, և թե՛ շարխափան հմայիլի դեր⁵⁷:

Այնուամենայնիվ, քուրդ անասնապահները մեծ կարևորություն են տվել իրական միջոցներով բուժման մեթոդներին: Կասկածից վեր է, որ դարերի փորձը չէր կարող անասնապահների մեջ չթողնել բազմաթիվ ճշմարիտ դիտումներ, որոնք անընդհատ կատարելագործվելով, դառնում էին հիմնավորված գիտելիքներ, իսկ ամենահիմնականը, որ դարերից ի վեր հայտնի էր քուրդ անասնապահին՝ ուշադիր և գործնական խնամքի կազմակերպումն էր:

Քրդերի կենցաղում հնուց մեծ նշանակություն է տրվել հովվի, նախրապանի մահակին: Ուստի, նրանց առանց մահակի, ինչպես նաև մի շարք այլ պարագանների (թաս, կաշվե տոպրակ, այծենակաճ և այլն) անհնար էր պատկերացնել: Անասունների արոտային շրջանի խնամքը, անվտանգության ապահովումը անասնապահներն ինչ-որ չափով կապում էին մահակի օգնության հետ: Ամեն անգամ արոտային շրջանն սկսվելիս, հովիվը վերցնելով իր մահակը, ասում էր՝ *даре швантие, даре гавантие*⁵⁸ (աստված, տուր մեզ հաջողություն, բարիք լինի), իսկ մարդիկ շնորհավորում էին մահակը և ցանկանում, որ այն բարեբեր լինի: Հոտն առաջին անգամ արոտի դուրս բերելիս,

⁵³ А. Алекперов, К вопросу об изучении культуры курдов («Труды Азербайджанского филиала АН СССР», вып. 25, Баку, 1936, стр. 57—60).

⁵⁴ А. А. Одабашян, Народные верования армян («Кавказский этнографический сборник», VI, М., 1976, стр. 108, 109—112).

⁵⁵ Յ մ ն ե Յ' վ ձ ա լ, *пәләдәтиед пьзмамтне нав к'ѹрдада*, Ереван, 1905, стр. 20—21

⁵⁶ Դարըկ նշանակում է փայտիկ, իսկ տուլյե՝ հնազանդեցնել («Арабско-русский словарь», стр. 615): Դաղդղղանի ծառը աճում է քարթարոտ կիրճերում ու ձորակներում: Հասկանալի է, որ դաղդղղան շինելիս վրայի փոշին երբեք չէին մաքրում, հավատալով, որ մաքրելիս նրա հմայական ուժը կկորչի: Դաղդղղանի նախշերը սովորաբար լինում էին եռանկյունաձև, սրտաձև և այլն: Նման նախշերի հանդիպում ենք քրդական գորգերի, տների առաստաղների, սյուների և այլ դարգանախշերի մեջ: Մահակապան քրդերի դաղդղղանները պատրաստում էին բարի, ազնիվ և հասարակության մեջ հեղինակություն վայելող տարեց մարդիկ (Քելբաշարի շրջան, 1973, տետր № 5, էջ 14), Օ. Л. Вильчевски և Կ. Мукринские курды (Переднеазиатский этнографический сборник, 1, М., 1958, стр. 216), Դ. Ф. Чурсин, Азербайджанские курды («Сборник материалов для описания местности и племен Кавказа», вып. 46, Махачкала, 1952, стр. 216).

⁵⁷ Յ մ ն ե Յ' վ ձ ա լ, նշվ. աշխ., էջ 21, Թալինի շրջան, 1974, տետր № 2, էջ 28:

⁵⁸ Այստեղից էլ քրդերի մեջ լայնորեն օգտագործվող *даре р'еншбэртие, реншбэртие* (հովվական մահակ) հայտնի դարձվածքը:

եզդի Զուկրիա ցեղի կանայք աշխատում էին նախրապանի մահակը լվանալ այն ամանում, որի մեջ պետք է կթվեր կովը, հավատալով, որ կաթը յուղալի կլինի⁵⁹։ Լավ հեղինակություն ունեցող հովվի մահակը փոխանցվում էր սերնդե-սերունդ։ Երբ անասնատերերը դժգոհ էին լինում հովվի աշխատանքից, ասում էին՝ «տուր մահակը» կամ այն խում էին նրա ձեռքից, որը նշանակում էր նրան զրկել հովվական իրավունքից։ Սա, հավանաբար, բացատրվում է նրանով, որ քրդական իրականության մեջ մահակը հովվին տվել են անասնատերերը⁶⁰։

Կորած անասուններին վտանգից ղերծ պահելու նպատակով քրդերը դիմում էին հետևյալ հնարներին։ Կորած կենդանուն գալլից պաշտպանելու համար քուրդ մուլաները գիր էին անում, ապա դանակի բերանը փակում⁶¹, իսկ քրդերը կացնի բերանը խփում էին դետին, դրանով, իբր, փակվում էր գալլի բերանը։ Ավելին, շատ ընտանիքներ արոտային շրջանում դանակի բերանը միշտ փակ էին պահում։

Անասնապահության հետ կապված տոնախմբություններն ու հավատալիքները, ինչպես նաև բուժման միջոցներն ու հնարները առաջացել են հազարամյակների ընթացքում՝ որպես քրդերի անասնապահական կենցաղի մշակութային կարևոր բաղադրիչներ։ Դրանք հետապնդել են անասուններին հովանավորող անտեսանելի ուժերի գթությունը շարժելու և շարը խափանելու նպատակ։ Կասկածից վեր է, որ բազմաթիվ ծեսեր և տոնախմբություններ իրենց մանրամասներով չեն հասել մինչև մեր օրերը։ Արդեն չկան և դրանք հիշող շատ տարեց ասացողներ։ Այնուհանդերձ, եղած նյութերը վկայում են, որ անասնապահության հետ կապված տոնախմբություններն ու հավատալիքները քրդերի տնտեսական կենցաղում եղել են հարուստ, բազմազան ու գունեղ։

Բերված նյութերի հետազոտությունը տակավին սպառիչ համարել չի կարելի։ Մի բան պարզ է, սակայն, որ շնայած բազմադարյան կրոնական տարբերությանը, ընդհանուր շատ բան կա մահմեդական և եզդի քրդերի սովորություններում։

Մեր օրերում սոցիալիստական ապրելակերպը նոր տնտեսական և հասարակական հարաբերություններ է ստեղծել քրդական կենցաղում, անասնապահական տնտեսության մեջ՝ դուրս մղելով հինն ու մոգականը։

ВЕРОВАНИЯ ЗАКАВКАЗСКИХ КУРДОВ, СВЯЗАННЫЕ СО СКОТОВОДСТВОМ

МАМОЕ ХАЛАТ (ДАРВЕШЯН)

Резюме

В хозяйственном быту курдов Закавказья засвидетельствованы многочисленные обряды и обычаи, наглядно проявляющиеся как в повседневной жизни, так и особенно в ритуальной обрядности, сопровож-

⁵⁹ Քալինի շրջան, 1974, տետր № 9, էջ 5։

⁶⁰ А. Оразов, Скотоводческие обряды у туркмен долин Сумбара и Чандира («Советская этнография», 1974, № 2, стр. 101)։

⁶¹ Мела Махмуд Баязиди, Եզդ. աշխ., էջ 59։

дающей весь годовой скотоводческий цикл. Обряды эти совершались в надежде обеспечить прирост и сохранность скота, а также изобилие молочных продуктов и сочетались с множеством рациональных приемов и навыков, выработанных курдами на протяжении столетий. По характеру и целенаправленности эти обряды можно подразделить на две основные группы—весенне-летние и осенне-зимние. Весенне-летний цикл начинается с ранней весны—празднование нового года (Навроз). Совершаемые обряды и принятые обычаи, выливающиеся в празднества, были направлены на обеспечение большого и здорового приплода, благополучного перегона скота на сезонные пастбища. Осенне-зимний цикл был связан с окончанием дойки крупного и мелкого рогатого скота, стрижкой ягнят, спуском с горных пастбищ и также сопровождался своеобразными ритуальными обычаями.